

ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ ՎԵՀԱՓԱՌ ՀԱՅՐԱՊԵՏԻ ՇՆՈՐՀԱՎՈՐԱԿԱՆ ԳԻՐԸ ԱՄԱՆՈՐԻ ԵՎ ՍՈՒՐԲ ԾՆՆԴՅԱՆ ՏՈՆԵՐԻ ԱՌԹԻՎ՝ ՈՒՂՂՎԱԾ ՀԱՅԱՍՏԱՆՅԱՅՑ ԵԿԵՂԵՑՈՒ ՆՎԻՐԱՊԵՏԱԿԱՆ ԵՐԵՔ ԱԹՈՌՆԵՐԻՆ, ԹԵՄԱԿԱԼ ԲՈԼՈՐ ԱՌԱՋՆՈՐԴՆԵՐԻՆ ԵՎ ԵԿԵՂԵՑԱԿԱՆ ՀԱՄԱՅՆՔՆԵՐԻՆ

«Քրիստոս ծնաւ և յայտնեցաւ»:

Սիրեցյալ եղբայր Մեր ի Քրիստոս,

Նոր տարվո այս լուսաբացին, երջանիկ ենք Ձեզի բերելու ավետիսը սուրբ Ծննդյան և Աստվածահայտնության Տյառն մերոյ Հիսուսի Քրիստոսի, որ իջավ երկիր ու ծնավ որպես մարդ ի Մարիամա սրբո Կուսեն, բերելու համար աշխարհին և մարդկության համայն՝ փրկագործ պատգամները խաղաղության և մարդասիրության:

Մեծ խորհուրդը հրաշալի այս Ծննդյան, այսօր ալ մեր հուսացյալ հոգիներուն կբերե մխիթարություն, ներշնչանք ու երանության տեսիլք, մեր օրերուն մանավանդ, երբ մարդկային աշխարհը տակավին հեռու է վերջնական ու տևական խաղաղ կյանքի մը նավահանգիստեն: Սակայն հաստատ լավատեսությամբ Մենք կմնանք մշտարթուն աղոթող ու գործող՝ վասն խաղաղ գոյակցության աշխարհի բոլոր ազգություններու և պետություններու:

Սիրո և խաղաղության ոգին թող իշխե նաև մեր եկեղեցական համայնքներեն ներս և մեր ժողովուրդի զավակները թող համերաշխ գործակցությամբ

ապրին ու ձեռք-ձեռքի տված զարգացնեն իրենց հոգևոր ու մշակութային կյանքը, հետզհետե առավել բարի ու շինարար արդյունքներով:

Ջերմապես կաղոթենք Միածնաէջ Մայր տաճարիս սուրբ Սեղանի առաջ, որ մեր Փրկչի հրաշալի Ծննդյան շնորհները առատապես բաշխվին տիրախնամ Աթոռիդ միաբանության և համայն հայ հավատացյալ ժողովուրդին, ի հոգվո մխիթարություն բոլորին և ի հաջողություն անոնց քրիստոսասեր ու եկեղեցաշեն գործոց:

Սուրբ Ծննդյան ուրախությամբ կմաղթենք Ձեզի, սիրեցյալ եղբայր, մշտատև քաջառողջություն և միշտ պտղառատ ու շինարար արդյունքներ Ձեր նվիրական առաքելության ճանապարհի վրա:

Շնորհավոր Նոր տարի և սուրբ Ծնունդ:

Եղբայրական սիրով ի Քրիստոս՝

ՎԱՉԳԵՆ Ա
ԾԱՅՐԱԳՈՒՅՆ ՊԱՏՐԻԱՐՔ ԵՎ ԿԱԹՈՂԻԿՈՍ
ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ

Ս. ԷՋՄԻԱԾԻՆ

*
* *

Ամանորի և ս. Ծննդյան տոների առթիվ Ամենայն Հայոց Վեհափառ Հայրապետի անունով ստացվեցին ամենաջերմ և հարգալից զգացմունքներով զեղուն բազմաթիվ շնորհավորական հեռագրեր և նամակներ մեր նվիրապետական երեք Աթոռների գահակալներից, արտասահմանի և ներքին բոլոր թեմերի առաջնորդներից, ազգային-եկեղեցական, մշակութային, հայրենակցական, տիկնանց, օրիորդաց և երիտասարդաց զանազան կազմակերպություններից, հայ և օտար պաշտոնական անձնավորություններից: